

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Մակար Եկմալյանի մասին եղած փաստական տվյալները բավականաչափ սուղ են։ Նրա ստեղծագործության մի մասը, ինչպես և ուրիշ նյութեր (այդ թվում նաև էպիստոլյար ժառանգությունը) կորել է մահվանից հետո։ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Եկմալյանի արխիվում կա կոմպոզիտորի ընդամենը մի նամակը՝ ուղղված իր աշակերտ Տեր-Կարապետյանին։

Փարիզի Նուպարյան մատենադարանում գտնվում են Եկմալյանի վեց անտիպ նամակները, ինչպես նաև մի գրավոր կարծիք՝ երաժիշտ Արամ Բժշկյանի հայկական ձայնագրության դասագրքի վերաբերյալ։ Գրադարանապետ Ա. Գարդաշյանը այդ ձեռագրերի ֆոտոպատճենները սիրալիրորեն նվիրաբերեց գրականության և արվեստի թանգարանի երաժշտական բաժնին։

Տպագրվող նամակներից շորսը գրված են իր՝ Եկմալյանի ձեռքով, հինգերորդի ձեռագիրը իրենը չէ, չնայած ոճն ու գրելաձևը նույնն են, ինչ-որ նախորդ նամակներում (հավանաբար ինչ-որ մեկը արտագրել է սևագրից)։ Բժշկյանի դասագրքի գրախոսականը նույնպես գրված է ուրիշ ձեռագրով, սակայն վերջում կա Եկմալյանի ստորագրությունը։ Կարելի է ենթադրել, որ բոլոր նամակները ուղղված են նույն անձնավորությանը՝ եպ. Վ. Մանկունուն, չնայած այն բանին, որ նամակներից երկուսը հասցեագրված են արք. Մ. Օրմանյանին (Օրմանյանի ազգանունը գրված է ոչ Եկմալյանի ձեռքով)։

Նամակներից երեքը վերաբերում են այն շրջանին, երբ երիտասարդ երաժիշտը ուղևորվել էր Պետերբուրգ՝ կոնսերվատորիա ընդունվելու նպատակով։ Դրանցից երեւում է, թե որքան մեծ է եղել պրոֆեսիոնալ կրթություն ստանալու նրա ցանկությունը և ինչ դժվարություններ է հաղթահարել նա այդ ճանապարհին։ Նամակներում կան նաև Եկմալյանի կենսագրությանը և գործունեությանը վերաբերող որոշ նոր տվյալներ։ Վերջին նամակը (1899 թ.) հատկանշական է նրանով, որ Եկմալյանը հանդես է գալիս որպես հայ երաժշտության ուղիները ճիշտ նշմարող անձնավորություն։

Ինչ վերաբերում է Ա. Բժշկյանի դասագրքի գրախոսականին, ապա այստեղ իրավացի է կոմպոզիտորի այն հարցադրումը, որ պետք է տարբեր մոտեցում ունենալ եվրոպական ու հայկական ձայնագրության խնդիրները լուսաբանելիս, որ հին հայկական երաժշտությունը օկտավային ձայնաշար չունի (ինչպես եվրոպական դասական երաժշտությունը), որ կիսա-ձայների օգտագործումը նույնպես տարբեր է եվրոպականից։ Գրախոսականը հետաքրքիր է նրանով, որ պատկերացում է տալիս նախակոմիտասյան շրջանի հայ երաժշտական մտքի տեսական մակարդակի մասին։

Հրապարակվող փաստաթղթերը գալիս են կրկին ապացուցելու, որ հանձին Եկմալյանի մենք ունեցել ենք ճիշտ դիրքերի վրա կանգնած և հայկական երաժշտության հետագա զարգացման խնդիրների հարցում ճիշտ կողմնորոշվող մի լուրջ երաժիշտ-պրոֆեսիոնալ։

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1

Սրբազան հայր

Քանի որ մենք սուրբ էջմիածնա հացով կապրինք և նորին վեհափառության շնորհը կվայելենք, պետք է որ նորանից մեզ հանձնած ծառայությունները ճշտիվ կատարենք և նորին վեհափառության ամեն մեկ ձեռնարկները մեր կարողության չափ աշխատենք բարձր աստիճանի մեջ սրբությամբ պահել ու իրրև մի վսեմ և անմոռանալի գաղձ ներկայացնել օտարների առաջ ևս։

Իսկ ընդհակառակն, ցավոք սրտի կնշմարենք, որ կներեք համարձակությանս, անհավատարիմ գտնվելով ոմանք իրենց սուրբ պարտավորությանց մեջ, կհանդգնին իրենց անձնական շահուց համար արատավորել և նվաստացնել նորին օծության վսեմ նպատակը Չայնագրության մասին:

Սրբազնությունդ հրամայեցիք ինձ գավառցի աշակերտներին դաս տալ, ես կամավոր հնազանդությամբ հանձնառու եղա և իմ պարտավորությունը կատարեցի և կատարելու եմ միշտ: Այդ աշակերտներից ավարտողները ո՛չ ապաքեն Սրբազնությանդ առաջ պետք է քննվին և իրենց ուսուցիչներից Սրբազնությանդ հրամանավ Վկայական ստանան:

Այժմ, ցավոք սրտի, կասեմ, որ ինձ մոտ ավարտող աշակերտք ուրիշներեն են վկայական ստանում, չեմ գիտեր ում հրամանավ, ուրեմն ես այսուհետև ի՞նչ սրտով նոցա դաս տամ. օրինակ ասածիս՝ Տփխիսեցի տղան երբոր քննվեց Սրբազնությանդ առաջ և իմ ներկայությամբ, Սրբազնությունդ նշմարեցիր իմ աշխատությունը, իսկ նա վկայականի թուղթը ստանում է Սրբազնությունիցդ և տալիս է Դավիթ սարկավազն է ստորագրում, և այս օրերս նույն Դավիթ սարկավազը և տիրացու Մելքիսեդեկը սինոդի անդամի նման մեկմեկ կնիք են շինել տվել, որին կամենում են կնքում են: Եթե այդպես լինի, հինգ կոպեկով կգրեն վկայականներ և կտան այն անպիտաններին, որոնց անունը հիշատակել հարկ չէ, այն ժամանակ Վեհափառի ձեռնարկի պատիվը կցածացնեն յուրյանց օգտի համար: Եթե այսպես մնա, ինձ համար շատ դժվար կլինի դաս տալ աշակերտներին, ուստի կարող է Սրբազնությունդ հրամայել այդ տեղից ինչ-որ արժանն է այն տփխիսեցի տղայի մասին, ըստ որում գա իմ աշակերտն է, և արգելել մեր դեռ աշակերտ եղբայրներին այսպիսի պարագաների մեջ անձնական կնիք գործածել, որո ծանրությունը կարծեմ իրենց վերա բավականին ճնշումն կազգե: Սպասելով Սրբազնությանդ արդար վճռույն մնամ միշտ խոնարհ որդի Ձեր

Մակար Դրիգորյան
Սկմալյան

1876 ամի

4-ն հունիսի

էջմիածին

2

Սրբազան հայր

Ինչպես խոստացած եմ Սրբազնությանդ առաջ որ որչափ կարողությունս կներե աշխատավոր լինիմ դեպի առ Աթոռը, հիշելով նորա ինձ տված հացը, սնունդը և ձրի շնորհը, ուստի չկամեցա Պետերբուրգում պարապ միջոց անցկացնել՝ սկսեցի պատրաստել ինձ մոտ գտնված Չայնագրյալ ժամագրքի 16 մամուլի համար ցանկ ուղիղի և սխալի², որը այստեղ չկարողացա դորա թվահամարները համեմատել՝ կարող եք այդտեղ համեմատել. և եթե կամիք մյուս մամուլները ևս ուղարկեք շուտով կպատրաստեմ:

Սրբազան հայր, աղաչում եմ շուտով մեկ պատասխան գրեիք իմ գործիս համար Սինոդի կողմից, որ զոնե մի քանի ամի բավականաչափ ռոճիկ տան, սոքա եթե կամենան այստեղ էլ սովորող խումբ կսկսեմ պատրաստել, Մոսկվայում:

ևս նույնպես ճեմարանում, որի հաստատության կարող եք տեղեկանալ տեր Հակոբ քահանայից: Ես այս երկու անգամ է, որ նամակով կխնդրեմ Սրբազնությանդ, իսկ մի անգամ այնչափ ինձ ցավեցրին, որ ստիպվեցա հեռագիր տալ, որ շուտով մի կարգադրություն լինի: Բայց մինչև այժմ մի պատասխան չեմ ստացել: Հույս ունիմ ինչպես մինչև այժմ Սրբազնությանդ շնորհը վայելած եմ, այս վերջինը ևս չեք խնայիլ Պետերբուրգում հասնելով օգնության Սինոդի հրամանները:

Որում մնամ խոնարհ որդի

Մակար Կրիզոստյան Եկմալյանց

1877 թվ. 31-ն օգոստոսի:

[Ս. Պետերբուրգ]

3

Նորին Սրբազնության Տյառն Վահրամա

Եպիսկոպոսի Մանկունվո

Սրբազան հայր

Բավական ժամանակե ի վեր կսպասեի գրությանցս պատասխաններին, բայց դժբախտաբար ոչ մեկի պատասխանը չստացա: Իհարկե, ոչ թե մոռացած լինելով Ձեր հոգեզավակին գրած չեք, այլ ժամանակի սուղ լինելու պատճառով գրած չեք, ուստի այս վերջին նամակիս պատասխանը հուսով կմնամ, զթառատ Հայրապետությանդ նվիրել: Ձեր թանկագին երկու բույսերը գրելու Սրբազնությանդ անառակ որդուն և նորից որդեգրությունը նորոգելու:

Ինչպես քանիցս անգամ գրած եմ թե Սրբազնությանդ և թե իմ ընկեր Պողոսին, իմ այստեղի պաշտոնի և վիճակիս վերայով, նմանապես և Սրբազան Սինոդին մեկ խնդիր՝ ոչ պատասխան ստացա և ոչ բարեկարգվելի եղև վիճակս, ի վերջո, անցնելով խղճալի ապրուստով այս տասն ամիսը անօգուտ ու անվաստակ միանգամայն՝ ահա լրանում է շուտով տարին, և սոքա խոսք տված են պահել ինձ այստեղ մինչև մայիս ամիսը, այնուհետև ոչ: Ես այս բանի համար տարակուսանաց մեջ կմաշվիմ, թե ինչ պետք է անեմ, ուստի մեկ աղերսանաց խնդիր ուղարկեցի նորին Վեհափառությանը, խնդրելով նորին օծությունեն, որ ինչպես մինչև այժմ յուր Սուրբ հովանավորության տակը եղած եմ, այժմ ես կխնդրեմ նույն հովանավորությունեն չզրկե, այլ ինձ համար նորից մեկ վիճակ որոշե: Կամ այստեղ նորից մնում եմ՝ իմ կերած ճաշի ստակեն երկու օրը մի անգամ ճաշելով մի փոքր ավելացնել և այն էլ տալիս եմ գործնական մասին սովորելու, իսկ ձայնականի և ձայներ շարադրելու՝ համար կարողութենես վեր է, որով ստիպված նպատակս հետաձգվում է: Ես մի քանի անգամ ներկա եղած եմ այս երկու առարկայի դասատվության. ըստ ասության նոցա շատ դյուրին է ինձ ուսանելու այդ առարկաները, իհարկե, ստակով: Սինոդեն եկած հրամանը շատ գեղեցիկ գրված էր, բայց ափսոս որ սոցա պինդ և կոպիտ վարմանցը չազդեց: Ինչպես երևում է, սոքա յուրյանց երեսները լվացած մարդիկ են. ամոթը կամ նախատինքը չի ազդեր...

...Սրբազան հայր, սպասում եմ ժամագրքի և պատարագի արարողության օրինակներին, բայց դեռ չեմ ստացել: Շատ շնորհակալ կլինեի եթե

ստանալի, Եզյանց և Սանասարյանց շատ ցուրտ կերպով են նայում այս արհեստի վերա և շատ հեռու են մնում օգնության կողմանե...

Մնամ Սրբազնությանդ խոնարհ ծառա և որդի

Մակար Գ. Եկմալլանց

1878 ամի

14-ն հունիսի

[Ս. Պետերբուրգ]

4

Նորին Սրբազնություն Տյառն Վահրամա

Արքեպիսկոպոս Մանկունվո

Սրբազան հայր

Նախ կհամարձակիմ որդիական սրտե նվիրել ողջունս և սուրբ աջույդ համբույր, և Երկրորդ հայտնել նախապես շնորհակալությունը Սրբազնության-նրդ արած անբավ բարերարությունը, միանգամայն աշխատություն կրելով հրաման զրեցիք իմ մասին տեղվույս հոգևոր կառավարությանը, որով պարտա-վորեցրիք Ձեր ծառային, Ես երբեք չեմ կարող մոռանալ իմ կյանքիս մեջ թե՛ Սուրբ էջմիածնա Աթոռի շնորհը և երախտիքը, և թե՛ Նորին Վեհափառության և Ձեր Սրբազնության արած բարերարությունները։ Չնայելով տասն և չորս ամիս է հեռացածս Սուրբ Աթոռեն, սակայն երբեք չեմ մոռանար և ամեն ըո-պեում կմտածեմ թե արդյո՞ք կարող եմ այս իմ ստացած երախտաց քառոր-դին երախտահատույց լինել։ Ես բաց եմ բաց կիսստովանիմ Սրբազնությանդ առջև, իմ այստեղ գալս կամ այստեղ իմ երաժշտական ուսմամբ պարապիլս բոլորն այն նպատակով, որ ժամանակին թե հաջողե Աստված մի փոքր էլ ես հարկավոր լինիմ Սուրբ Աթոռին։ Ես այն պատճառով կցանկանայի որ ռոճիկս մի փոքր ավելանար, որպեսզի այս իմ սկսած նպատակս ի գլուխ տանեի, որովհետև բացի եվրոպական ձայնագրերի գործնական կերպով սո-վորելս, այլ և կցանկայի և հարկավորությունը կա թե սորա ձայնական մասն ու թե ձայներ շարագրելու մասն ևս ուսանել, ես միմիայն կարողանամ մեկ ուրիշ քաղաք ուսուցչության պաշտոնի հաստատվել։ Նորա համար նորից կիսնդրեմ այստեղ, որովհետև կամենում եմ, ինչպես վերը գրած եմ, հին որդեգրությունը նորոգել, որդեգրվել նորից Սրբազնությունեդ և Սուրբ էջմիած-նա Աթոռի հետ, այսինքն բարեխոսելով Սրբազնությունդ Նորին Վեհափառու-թյանը, որ նորից այստեղ նշանակելով ինձ այս պաշտոնում և մի փոքր օգ-նություն Սուրբ Աթոռեն. և եթե զժվար է Աթոռի համար, կարելի է Բեսարաբիո վիճակեն ամսական տասն արծաթ ուղարկել մինչև մյուս մայիս։ Ես այստեղ պարապելով և կատարելագործվելով եվրոպական ձայնագրությանը կուխտեմ առաջի Աստուծո ու առաջի Սուրբ Աթոռ էջմիածնի, զկնի ուսանելու վերա-դառնամ էջմիածին Երևք ամբողջ տարի ևս ծառայելով ուսուցանել նոցա որոյ հարկե իմ սովորածը։ Ես արդեն սկսած և բավականաչափ սովորած եմ եվրո-պական ձայնագրությունը, ասես կհամարիմ այսպես թերի թողնել։ Ինձ միայն բավական է մի ձմեռ ևս սովորել, այնուհետև ես վստահ եմ ցույց տա-լու իմ աշխատանաց արդյունքը։ Սրբազան հայր, ևս հուսով եմ, որ Սուրբ էջմիածնա Աթոռը չի պիտի այսպիսի մի արդյունավոր գործի նպաստելու, որ ընդամենը հարյուր քսան արծաթ կանե։ Իհարկե, այդ հարյուր քսան ար-

ծաթով էջմիածինը կունենա ժամանակին յուր Աթոռի մեջ և այդ արհեստը դիտեցողներ և ինձ խեղճիս էլ պարզեաժ կլինի դորանով կյանք և ապրուստ։ Ի վերջո, Սրբազնությանդ ազնիվ խոսք եմ տալիս, որ միամիտ լինեք այս իմ խոստացած պայմանի վերա, ես ավելի ոչինչով չեմ կարող հավատացնել։ Ուրեմն ավելորդ եմ [համարում] երկարացնել նամակս և տեսակ-տեսակ խոստմունքներով լցնել։

Սրբազան հայր,

Չդիտեմ Ձայնագրյալ ժամագիրքը և պատարագի արարողությունը տըպ-ված է թե ոչ. եթե տպված է՝ շատ շնորհակալ կլինեի մեկ-մեկ օրինակ ունենալ, որովհետև «Արժան է մշակն վարձու յուրո»։ Ուստի սպասելով Սրբազնությանդ գթառատ նամակին մնամ

Խոնարհ ծառա Սրբազնությանդ
դպիր Մակար Եկմալյանց

1878 թի 18-ն մարտի
Ի Ս. Պետերբուրգ։

5

Գերապատիվ Սրբազան հայր.

Այս անգամ ես շատ անբաղաքավարի գտնվեցա Սրբազնությանդ առաջ իմ ուշ պատասխանելու համար. այդ հանցանքը իմ մոռացկոտությունից առաջացավ, այն է, որ Ձեր նամակը սխալմամբ պատասխանած նամակների կապոցում դնելով՝ մոռացել էի։ Պետք է ասած, որ այս վերջին երկու տարին շատ նամակներ և հանձնարարություններ եմ ստանում և հաճախ այսպիսի սխալմունքների մեջ եմ ընկած։

Սրբազնությանդ երկու խնդիրներից՝ առաջինը դժվարացա կատարելու այն է իմ կազմած պատարագը վերածել հայկականի⁴, երեք պատճառներից ստիպված։ Նախ, որ այդ գործը շատ մեծ և դժվար բան է և շատ ժամանակ պիտի խլի, երկրորդ՝ ես նորից պետք է հեղաշրջեի հայկական ձայնագրության մինչև այժմ գործածված ձևը և երրորդ՝ որ իմ միակ ցանկությունս է, որ դա մնար եվրոպական խաղերով, որովհետև պատճառ կլինի ձայնագրության տարածվելուն, ուրի մեջ եմ գտնում մեծ ապագա երաժշտության հաստատվիր (ընդգծումը մերն է— Ա. Գ.)։

Սրբազան Տեր, չկարծեք, որ ես իմ այս գաղափարովը կամենում եմ խավար ձգել մեր երջանկահիշատակ Հայրապետի⁵ անմահ գործին. ոչ, քավ լիցի, ընդհակառակն, ես գտնում եմ, որ այդ գաղափարը իրագործվելուց հետո՝ ավելի պիտի անմահանա պատմության մեջ։ Եթե չլինեի Գրիգոր Մեծ պապը⁶ և նրա «Անտիֆոնարիան» չէր ստեղծվի և արևմտյան քրիստոնյա եկեղեցու երաժշտարվեստը, որից էլ առաջ եկավ աշխարհականը։ Եթե չլինեի Գվիդոն վարդապետը⁷՝ չէին ծնվի Պալեստրինան, Բախը, Մոցարտը, Բեթհովենը, Շոպենը և այլք։ Այս բոլորի սկիզբը և պատճառն է գովելի։ Եթե Սըրբազնությանդ կցանկանա ունենալ իմ պատարագը եվրոպական խաղերով՝ ամենայն ուրախությամբ և սիրով պատրաստ եմ որդիական երախտագիտություն մեծ նվիրաբերել։

Գալով Չերդ Սրբազնությանդ երկրորդ խնդրին, պետք է ասեմ, որ իհարկե, նամակով չի կարելի լիակատար ասել այն, ինչ որ հարկավոր է, բայց համենայն դեպս, Չեր Սրբազնությանդ ասածի հիման վրա, աշխատեցի կիսաձայների կանոնները բացատրել⁸:

Մնամ հարգանք երաժշտապետ

Մ. Եկմալյան

1899 թ. 12-ն մայիսի

Տփլիս

Մի քանի խոսք Պ. Բժշկյանի դասագրքի մասին

Պ. Բժշկյանի դասագիրքը, որ նախնական գիտելիք է, բավական պարբերաբար է* կազմած ըստ եվրոպական երաժշտության, այստեղ ևս ոչինչ չունիմ դրա դեմ ասելու: Պատասխանատու գործ այս գրքի երկրորդ մասն է:

Նախ և առաջ հարկավոր է գիտնալ, որ մեր Հայկական, կամ ավելի ճիշտն ասած հին ասիական ազգերի ձայնագրությունը այլ տեսակ է եղել, ոչ այնպես, ինչպես այժմյան Արևմտյանը: Հին ձայնագրությունը չէ ունեցել այնպիսի ությակներ, ինչպիսիներն այժմ ենք կազմում, կիսաձայների գործածությունը այն չէ, ինչպես այժմյան Հայկական ձայնագրության դասագրքերն և ուսուցիչներն են ավանդում: Նոքա եղանակները կազմում էին տետրախորդներով և պենտախորդներով, ընդունելով անփոփոխ երկու բնական կես աստիճաններ: Իսկ այժմ մենք այս բոլոր հին ձևի գործածությունը թողնելով՝ հին նշաններով եվրոպական երաժշտության դասագիրք ենք կազմում: Ես կարծում եմ, որ հին եղանակները ճշտությամբ արտահայտելու համար հարկավոր են հին կանոնները, մեր այժմյան աշխարհաբար լեզվի քերականությունը չէ՝ որ մեր գրաբարի քերականությանը չի համապատասխանում: Յոթներորդ դարի սկզբում Գրիգոր Մեծ պապի օրով, գոյություն է ունեցել մի շարք 15 ձայների, միմիայն արական ձայների համար. G, A, H, C, D, E, F, g, a, h, c, d,


e, f, g, յուր բնական երկու կիսաձայներով՝ այն է $E \overset{1/2}{-} F$, $H \overset{1/2}{-} C$

որ համապատասխանում է մեր Հայկական $\text{Շ} \overset{1/2}{-} \text{Ֆ}$, $\text{Հ} \overset{1/2}{-} \text{Ը}$, Դեռ


նրանից առաջ բոլոր քրիստոնյա ազգերի հոգևոր երաժշտությունը չորրորդ դարի սկզբում— 325 թ. սուրբ Ամբրոսիոսի⁹ ձեռքով կարգի բերվեցավ՝ բոլոր աղոթքները չորս եղանակների վրա, որոնք կոչվեցան Ամբրոսյան, այսինքն I, II, III, IV բուն կամ իսկական եղանակներ: Հունական երաժշտության մեջ նոքա կոչվում էին հոնեական, դորիական, փոյուգիական և լիդիական: Այս եղանակները ըստ իս գոյություն ունեին նախ քան ղՔրիստոս, թեպետ սլատմաբաններից ոմանք հակառակ կարծիքի են: Քրիստոնյաների երաժշտությունը զլիսավորապես դանաղանվում էր կոապաշտության երաժշտությունից, որ նա դիատոնիկական էր, մինչդեռ հեթանոսներին թույլ էր տրվում խրոմատիկ-

* Բոլոր ընդգծումները հեղինակինն են—Ա. Գ.


Համառոտ ասելով՝ հայերը, ի հարկե, նախքան քրիստոնեությունը՝ ունեցել են խումատիկական հեթանոսյան երգեր, շորրորդ դարի սկզբից մինչև յոթերորդ դարը հայերը՝ որպես քրիստոնյա ազգ՝ գործ էին ածում Ամբրոսյան եղանակները և այն ժամանակից հայոց թե ազգային և հոգևոր երաժշտությունը ենթարկվեց արաբ ու պարսկական երաժշտության ազդեցության և ընդունեց նրա ձևը և հենց նրա մեջ էլ պետք է որոնել հայոց եղանակների ճշտությունը¹²։ Նոցա եղանակների հաջորդությունը ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.




Ամեն մի տետրախորդ ենթարկվում է երեք տեսակ փոփոխության.



և այլն



որովհետև ըստ եվրոպականի կազմված դասագիրքը պետք է հորինված լինի բնական ութնյակով, ուստի այս ութնյակներից բնականին կհամապատասխանի բենկորճի ութնյակը, միշտ ընդունելով ոչ թե փուշը առաջին աստիճան, այլ բենկորճը՝



Երաժշտագետ Մ. Եկմալյան

1899 թ. 15-ն մայիսի փոխի

ԾԱՆՈԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքը վերաբերում է այն բանին, որ Գևորգ IV կաթողիկոսը 1873—1874 թթ. ձեռնարկել էր հայ հոգևոր երաժշտության ձայնագրությունը բանավոր ավանդույթներով պահպանված դարավոր պրոֆեսիոնալ երաժշտությունը աղավաղումից և մոռացությունից փրկելու համար: Կաթողիկոսը պոլսահայ երաժիշտ Նիկողոս Թաշճյանին այդ նպատակով հրավիրել էր Էփեսոսին և հանձնարարել միաժամանակ կազմել հայկական ձայնագրության մի դասագիրք, նաև պատրաստել աշակերտներ, որոնք կկարողանան հետագայում Հայաստանի տարբեր գավառներում հայկական ձայնագրություն դասավանդել:

2. Ն. Թաշճյանի ամենաշնորհալի աշակերտը լինելով, Մ. Եկմալյանը Թաշճյանի Պոլիս վերադառնալուց հետո (1874 թ.) շարունակեց իր ուսուցչի գործը և սրբագրելով նրա պատարագը, պատրաստեց երկրորդ հրատարակությունը:

3. «Գործնական մաս» ասելով Եկմալյանը ըստ երևույթին նկատի ունի «պրակտիկ կոմպոզիցիայի» առարկան: Իսկ «ձայնական» և «ձայներ շարադրելը» պետք է հասկանալ «թեորիա» և «հարմոնիա» առարկաները:

4. Անցյալ դարի 80—90-ական թթ. պայքար ծավալվեց հայկական և եվրոպական ձայնագրության շուրջը: Առաջադեմ մտավորականությունը եվրոպական ձայնագրության կողմնակից էր, մինչդեռ հասարակության հետադեմ ներկայացուցիչները և հատկապես հոգևորականությունը պայքարում էին հօգուտ հայկական ձայնագրության:

5. Խոսքը վերաբերում է Գևորգ IV կաթողիկոսին:

6. Գրիգոր Առաջին («Մեծ» մականունով) Հոռմի պապի օրով (մահացել է 604 թ.) եկեղեցական երգեցողությունը կանոնավորվել է, և VII դարի ընթացքում եկեղեցական արարողության խոսքը և երգեցողությունը ձայնագրվել և ի մի է բերվել: Այստեղից էլ կաթողիկ եկեղեցու երաժշտության հիմքը կազմող հոգևոր ձայնաեղանակները կոչվել են «գրեգորիանական խորալ»:

7. Գվիդո դը Արեցո—X—XI դարերի իտալական երաժիշտ, որի նոտային ձայնագրության բեֆորմը հիմք է ծառայել եվրոպական դասական երաժշտության նոտացիայի ուսմունքի համար:

8. Վահրամ Մանկունին ըստ երևույթին խնդրել է, որ Եկմալյանը իր խոսքն ասի հայկական և եվրոպական ձայնագրության վերաբերյալ, որովհետև հենց այդ ժամանակաշրջանում է, որ Կոմիտասը հանդես եկավ իր հայտնի հողվածով, որտեղ լուսաբանում էր հայկական ձայնաշարի կազմության հարցերը: Կամ գուցե ուզում էր Ա. Բժշկյանի ձեռնարկի մասին Եկմալյանի կարծիքը իմանալ: Վերջին նախադասության բացատրությունը պետք է փնտրել, հավանաբար, Ա. Բժշկյանի ձեռնարկի գրախոսականում, որովհետև գրախոսականը պատրաստ է եղել այս նամակից ճիշտ երեք օր հետո:

9. Ամբրոսիոս—IV դ. եկեղեցական գործիչ, որ հիմք դրեց արևմտաեվրոպական քրիստոնեական եկեղեցական երգեցողությանը:

10. Եկմալյանը սկզբնական աստիճանն է ընդունում «սոլ»-ը և ոչ թե «դո»-ն:

11. Այստեղ Եկմալյանը սխալմամբ «բաժանյալ»-ի փոխարեն գրել է «միացյալ»:

12. Եկմալյանի տեսակետը ազդեցությունների վերաբերյալ, որ տեղ է գտել նաև Պատարագի առաջաբանում, ժամանակին հերքվել է Կոմիտասի կողմից նրա՝ պատարագի հրատարակության կապակցությամբ գրված գրախոսականում:

13. Հայկական ձայնագրության օրինակներում կան որոշ տեխնիկական վրիպումներ, որոնք ըստ երևույթին արդյունք են հապճեպ գրության:

НОВЫЕ МАТЕРИАЛЫ ИЗ НАСЛЕДИЯ МАКАРА ЕКМАЛЯНА

А. Г. ГРИГОРЯН

(Резюме)

Архив М. Екмаляна — одного из основоположников армянской национальной композиторской школы — довольно беден. После его смерти были утеряны не только часть творческого наследия, но и многие документы, в частности почти все эпистолярное наследие композитора. Публикуемые материалы (пять писем и рецензия на учебник ар-

мянской нотописи А. Бжшкяна), предоставленные парижской библиотекой Нупарян, дают возможность полнее осветить творческую личность Екмаляна.

Из приведенных писем три относятся к периоду обучения композитора в Петербургской консерватории. В них имеются некоторые факты, относящиеся к деятельности Екмаляна, а также сведения, относящиеся к годам учебы и характеризующие его как музыканта и человека. Письмо, датированное 1899 г., примечательно тем, что в нем четко сформулированы передовые взгляды композитора на будущее армянской музыки.

Рецензия на учебник А. Бжшкяна имеет ряд положительных высказываний по вопросам теории армянской нотописи. Она дает представление о теоретическом уровне докомитасовского музыкознания.

Публикуемые материалы (хранятся в библиотеке Нупарян в Париже) являются подтверждением того, что в лице Екмаляна армянская музыка имела серьезного музыканта-профессионала, стоящего на передовых позициях и правильно ориентированного в будущем национального искусства.